Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-884-26.10.2015-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի՝

ա)3-րդ կետում «5» թիվը փոխարինել «7» թվով,

բ) 5-րդ կետում «9» թիվը փոխարինել «11» թվով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

h/h	Առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1.	**2.**	**3.**	**4.**	**5.**
1.	Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Հովհաննես Մարգարյան 2015-11-18 02/10.3/19616-15 գրություն	«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հոդված առաջինում «7» թիվը փոխարինել «6» թվով, իսկ «11» թիվը՝ «10» թվով:	Առաջարկությունը չի ընդունվել:	Նախագծով առաջարկվող լուծումը հիմնվում է ՀՀ և Երևան քաղաքի հիշյալ երկու վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների մակարդակով 2013-2014թթ. դատական ծանրաբեռնվածության վերաբերյալ վիճակագրական տվյալների ուսումնասիրության և վերլուծության վրա, որպիսի պայմաններում մշակվել է խնդրի օպտիմալ լուծումն ապահովող կարգավորման մոդել: Հակառակ պարագայում դատավորների՝ նախագծով առաջարկվող թվի կիսով չափ կրճատումը չի կարող ապահովել ակնկալվող արդյունքը: